և եղկելի կանայք, աղջկունք և մանկունք ի պատուհանից տանց զպատկերս սրբոց և աստուածածնայ արտաքս բերեալ, ցուցանէին նոցա. ի սէր նոցա լալագին արտասուօք ողորմ հառաչմամբ մորմոքէին, պաղատէին չար ինչ չառնել անձանց իւրեանց. զսակաւիկն մնացեալ յընչից իւրեանց, ի պէտս ապրուստից յայս դառն կարօտութեան ժամանակիս, չխուել, չառնուլ, չբառնալ. թէպէտ սոքա զայս ամենայն պաղատէին, թէպէտ և յոտս ալտեղեալս նոցա զհամբոյր շրթանց իւրեանց մատուցանէին նոցա, որք ի չմարդիս համարեալ էին, սակայն ոչինչ օգտէին. այլ նոքա կծանէին, կապտէին, կողոպտէին. և յոր ձեռնհաս էին՝ ոչ զանց առնէին, և ի խորհրդոց իւրեանց և ի կամաց չարութեան ոչ զիջանէին։ Քանդեցին, աւերեցին զերկիրն, և զցանկալի ցանկալի ընչից պերճութիւն և զճոխութիւն յանձինս գրաւեցին, առին գնացին յիւրեանս, և ոչ թողին ինչ՝ զոր նկատեցին աչք իւրեանց. և զամենայն չայխայս գտեալս անդ կապեցին իւրեանց եէտէկս, և հեռացան մերժեցան հարուստ մի և հասին ի զէթին պուռնուն։ Անտի դարձեալ արձակեցին նաւ մի ի քաղաքն, երթայր յոխորտանօք՝ եհաս եկաց անդ մօտ ի քաղաքն, էարկ հուր ի նաւսն. այրեաց հրդեհեաց զամենայն գեղեցկութիւնն և զամրութիւնն նորաշէն՝ տաճկին. եկաց հանդիպոյ, տեսին և զուարճացան տեսարանք նոցա, խայտացին և ծափս հարին ի վերայ թշուառութեան ատելեաց իւրեանց, և մխիթարեցին զանձինս իւրեանց չարեօք նոցա։ Դարձան ապա առ իւրեանս, և ցուցին զոր գործեցին. թողին և այնպէս զքաղաքն, և գնացին յոր և կամեցան։ Այս անցք առմանն միտիլինու։ Գօնսուլն ֆռանսայու որ ի միտիլի՝ հազիւ հանդերձ կնաւ իւրով, զգեստուքն որ ի վերայ ասեն մարթացաւ զանձն ապրեցուցանել ի փառօս կղզին, անդ ապաւինիլ առ ժամանակ ինչ, մինչև տեսցէ զկատարած գործոյն՝ յոր վճարեսցի, թողեալ զամենայն ինչս ի յափշտակութիւն նոցա։

Հայ ոմն պէյօղլուցի ՃՆկլիկ մականուանեալ՝ բարձեալ յաղէքսանդրու ի նաւ ֆռանսզի աւելի քան զհարիւր հազար դենարաց բեռինս բրնծաց և խահվէիից և խնկոց տանէր ի կոստանդնուպօլիս, զոլոյ զառաջս առեալ հիւսիսայինքն, յափշտակեն զամենայն ինչս նորա, և տանին ի փառօս ի զօրապետն իւրեանց ի օռլօֆ, և զհայն ընդ նմա, և նա տայ նմա եօթն հազարաց ինչս ի ձեռս նորա, և զայլս առնու առ իւր, և թուղթ մի ի ձեռս հայոյն իբր առյապայն վճարել. որ զայս օրինակ բազմաց ասեն արարեալ, և նա անդ այնպէս դեգերեալ կայ՝ հնարս ինչ գտանել, բայց ամենևին չիք յոյս։ Եւ այլ քանի մի հայոց այս անցք դիպեալ են, որք այժմ դեգերին անդ ողբալով։ Իսկ յունաց անթիւ և անհամար այսպիսի անցք. վասն որոյ թէ որչափ այժմ անիծանեն և հայհոյեն զնոսա, տկարանամ ընդ գրով արկանել։ Տեսի և խօսեցայ ընդ բիւրս ի յունաց. չգտի չտեսի զոք, որ բարիս խօսէր զնոցանէ, կամ ցանկացօղ լիցի նորա գալստեանն։ Ամենայն կղզիք ապականեալ են արիւնհեղութեամբ և զրկանօք ի ձեռաց արանց ամպարշտաց, որք իբր ջատագովք հիւսիսայնոյն՝ աներկիւղ յումեքէ՝ զոր կամին կողոպտեն, զոր ցանկան պղծեն, և ընդ որ զչարին սպանանեն. չիք որ քննէն, չիք որ դատէն։ Ամենեքեան սոքա զգեստաւորեալ զօրէն խալիֆանցիի տաճկին, զոյգ մի փիշտոֆից ի մէջս, և եաթաղանն առընթեր, և զսուր երկսայրի առ զստեամբ. և փօշի կարմիր՝ կանաչ՝ սպիտակ իւրաքանչիւր ըստ իւրեանց հաճոյից ի գլուխս։

Ասեն եթէ այժմ անթիւ բազմութիւն ի հիւսիսայնոյն նաւուք, և թե նաւ գործիք պատերազմականք խումպառայք. կիլլէք և այլ ինչ։ Այժմ աստ զամենայն երկիր զոր առնու մոսկօֆ՝ աւերէ քանդէ թողու այնպէս և դառնայ յետս, և ոչինչ փոյթ է նմա տիրել, իբր զի չունի ասեն հրաման։ Նաւուցն ֆռանսզի ամենևին ոչինչ ակնածեն, ըստ հաճոյից քննեն, հային, արգելեն տանիլ ինչ կերակրեղէն ի տաճիկ. և բազում անգամ ևս առնուն ի նաւուցն զոր ինչ և կամին. այլ ի նաւս ինկիլիզին և ֆլէմէնկին բազում ակնածութեամբ գնան, աչք խբեն, թէև տեսանեն զնոսա լի ամենայն բարութեամբ բրնծոյ և ցորենոյ, թողուն զնոսա տանիլ, զորոց մինչև մեք տեսաք աչօք մերովք, որ գայր յաղէքսանդրու լի բրնծովք ևն. զոր քննեցին՝ տեսին և աչք խբեցին։ Փոքր մի ևս վէնէտիկեան նաւուցն ակնածեն, այլ ոչ այնչափ։ Այս անցք են այժմ յայսոսիկ վայրս։...

Գրեցաւ յամի տեառն 1771 ի դեկտ. 7